ղակի եկամուտ չէ ստանում։ Հասոյթը թող տրուած է խաներին նորա համար, որ նորանք այդ միջոցով կարողանան զինուորական ոյժ պահպանել և առհարկին պաշտպանեն երկիրը նորա թշնամիների դէմ։ Այդ հիման վերայ պատերազմի ժամանակ Մագուն պարտական է հարիւր այրուձի և մի վաշտ հետի զինուորներ ճակատեցնել. Աւաջուղը երկու հարիւր այրուձի։ Բայց խաները ի չարն են գործածում շահից տուած արտօնութիւնը. զինուորական պատրաստութեան համար բոլորովին հոգ չեն տանում։ Նոքա աշխատում են միմիայն հարստանալու, դորա համար էլ աւերում են արքունի գիւղերը և այդ աւերմունքներից հիմնում են իւրեանց համար սեպհական գիւղեր *)։

Խանութիւններից երկուսը նոր ժամանակում են հիմնուած. Աւաջուղի խաների հայրը Գիւմրեցի է։ Հիւսէին աղէն Հայտարանցոց ազնուա-

---

*) Խանները իրանց սեպհական գիւղերը բազմացնելու համար դնում են արքունական գիւղի մօտ եղած մի ազնուականի հողերը եւ նրա վերայ շինում են մի նոր գիւղ։ Այդ գիւղը բնակիչներով լցնելու համար ճնշում են արքունի գիւղում բնակվածներին գրկելով նրանց ուռոգելու ջրից, երբ դա առատութեամբ բաժանվում է նոր գիւղումը. այդպիսով թագաւորական գիւղացիները ստիպված են լինում փոխադրվելու։